Պաշտոնական կարծիք

Աստղիկ Լևոնի Խուրշուդյանի

«Իրավական պետության հայեցակարգի ձևավորումը և զարգացումը իրավական ուսմունքների հոլովույթում» թեմայով ԺԲ 00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

Գրախոսվող աշխատանքում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել իրավական պետության վերաբերյալ անցյալի և արդի հայեցակարգային մոտեցումները և հետազոտության արդյունքների հիման վրա ձևակերպել է հետևություններ ու առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կայացման ուղղությամբ:

Քննարկվող աշխատանքի թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ հեղինակը խորը պատմական վերլուծության է ենթարկել իրավական պետության վերաբերյալ կոնցեպցիաները, հայեցակարգային մոտեցումները և հանգել է այն ճիշտ եզրակացության, որ դրանք իրենց տեսական նշանակությունը չեն կորցրել նաև ներկայիս ժամանակաշրջանում:

Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, իրավական պետության և իրավունքի գերակայության մասին պատկերացումների ակունքները ձգվում են մինչև երկրային կարգերի, մարդկանց հասարակական և պետական կյանքի կառուցվածքի ձևերի, մարդկային փոխհարաբերությունների եղանակների ու կանոնների և այլնի վաղ դիցաբանական, առասպելաբանական ու կրոնական ակունքները: Հետագա դարերի (միջնադար, նոր և նորագույն) ընթացքում իրավունքի գերակայության, պետությանը և հասարակությանը իրավունքով կառավարելը (Թովմաս Աքվինացի, Մխիթար Գոշ), պետության բանական և իրավական լինելը (Կանտ, Հեգել) գաղափարները հիմք հանդիսացան ժամանակակից իրավական պետության տեսության և պրակտիկայի համար, դրանք ամրագրվեցին բազմաթիվ պետությունների սահմանադրություններում (այդ թվում Հայաստանի Հանրապետության):

Բացի վերոնշյալից, 20-րդ դարում ձևավորվում է «սոցիալ-իրավական պետության» հայեցակարգը, որի մասին հեղինակը հանգամանորեն քննարկել է թեկնածուական աշխատանքի երրորդ գլխում:

Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ «սոցիալ-իրավական պետության հիմնական կզբունքը հենց մարդկանց սուբյեկտիվ իրավունքների ու դրանց իրացման օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակումն է՝ մարդկանց ազատությունների ու իշխանության սահմանների հստակեցումը» (Ատենախոսություն, էջ 48):

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը նորովի մեթոդաբանությամբ բացահայտել է իրավական պետության էությունը, այն բնութագրելով որպես «կենդանի իրավական օրգանիզմ», որին բնորոշ է հասարակության պահանջներին անմիջական արագ և որակյալ արձանագանքելը, իրավունքի սահմաններում հանրային և անհատական շահերի ողջամիտ զուգակցումը և լուծումը, հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բանական պահամջմունքների բավարարման համար համապատասխան սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծումը, ֆիզիզկական և իրավաբանական անձանց նախաձեռնությունների խրախուսումը, աջակցումը, հանրային իշխանությունների պարբերաբար հաշվետվողականության և իրենց սոցիալական պատասխանատվության ապահովումը: Աշխատանքում հիմնավորվում է նաև այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի պետականության զարգացման արդի փուլում «իրավական պետությունը» տրանսֆորմացիայի է ենթարկվում «սոցիալ-իրավական» պետության, որի հիմնական առանձնահատկություններից է ոչ միայն «իրավունքով կառավարելը», այլ նաև իրավունքի միջոցով ստեղծել «սոցիալական արդարության» սկզբունքի կենսագործման ապահովումը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում: Սոցիալ-իրավական պետության բոլոր գործառնական լիազորությունները ոչ միայն սահմանափակվում են իրավունքով, այլ դրանք ուղղված պետք է լինեն մեկ հիմնական նպատակի իրականացմանը՝ անհատի իրավունքների երաշխավորված պաշպանությանը, բարեկեցիկ և անվտանգ կյանքի ապահովմանը:

Աշխատանքում հեղինակը լիարժեքորեն է օգտագործել սկզբնաղբյուրները, նորմատիվ նյութը և մասնագիտական գրականությունը:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, հեղինակը խոսելով սոցիալ-իրավական պետության մասին, իրավացիորեն նշում է, որ դա սոցիալական և իրավական պետության մեխանիկական միավորում չէ, սակայն հետագա շարունակությունում նշում է, որ սոցիալ-իրավական պետությունը որոշակի հակասություն է պարունակում, ինչի հետ դժվար է համաձայնվել, քանզի և՛ սոցիալական, և՛ իրավական պետականությունը հենվում են իրավունքի գերակայության և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության կանխադրույթի վրա, այսինքն՝ դրանք անտագոնիզմ (հակասական) չեն և չեն էլ կարող լինել:

Երկրորդ, որոշակի անորոշություն է պարունակում աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում քննարկվող հարցերը սահմանադրության և սահմանադրականության վերաբերյալ: Մասնավորապես, դեռևս հստակ հայտնի չէ, սահմանադրական բարեփոխումները ո՞ր ուղղությամբ պետք է ընթանան՝ սահմանադրական փոփոխությունների, թե նոր սահմանադրության մշակման ուղղությամբ: Սահմանադրական հանձնաժողովի ավելի քան երեք տարվա աշխատանքը բացառապես ոչինչ չտվեց (ոչ՛ հայեցակարգ, ոչ՛ փոփոխությունների նախագիծ) և հասարակությանը հայտնի չէ, թե որ ուղղությամբ է շարժվում սահմանադրական հանձնաժողովը: Այս պայմաններում հեղինակին, մեր կարծիքով, մնում էր միայն զարգացնել սոցիալ-իրավական պետության վերաբերյալ տեսական դրույթները՝ հեռանկարները մեզ ազգային շահերի և ազգային գաղափարախոսության դիրքերից:

Սակայն նշված նկատառումները, ըստ էության, ցանկություններ են և բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Հեղինակի կողմից հրատարակված գիտական աշխատանքներում լիովին արտացոլվել են ատենախոսության հիմնական դրույթները:

Եզրակացություն. Աստղիկ Լևոնի Խուրշուդյանի «Իրավական պետության հայեցակարգի ձևավորումը և զարգացումը իրավական ուսմունքների հոլովույթում»

թեմայով ԺԲ 00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն և ամբողջական հետազոտություն է, լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Մ. Մաշտոցի անվան համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Հ. Զ. Սարգսյան

Հովհաննես Զավենի Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Մ. Մաշտոցի անվան համալսարանի ուսումնականգծով պրոռեկտոր,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մ. Թեսսյան